«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝ Պատմություն

Հեղինակ՝ Արծվիկ Ավետիսյան

Մարզ՝ Շիրակ

Հաստատություն՝ «Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն.....3

Գրականության ակնարկ.....5

Գործնական համատեքստ.....9

Եզրակացություն.....17

Օգտագործված գրականության ցանկ.....18

Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ Հայրենիք,

Կա մեկ ճակատագիր,

Հետևաբար՝ կա մեկ համակեցություն

և գործելու մեկ ուղղություն:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյան

Ներածություն

Հետազոտության արդիականությունը՝ Արդի դարաշրջանում, երբ տեղեկատվական հեղեղը ողողել է ամբողջ աշխարհը, նոր խնդիրներ են դրվում հասարակության առջև, որոնց լուծումից է կախված մատաղ սերնդի վաղվա օրը: Հաջողությամբ արձագանքելով ժամանակի մարտահրավերներին՝ կրթության ոլորտում կատարված բարեփոխումները, պահանջելով նորանոր լուծումներ, ձևեր ու մեթոդներ, մշակել է սովորողների արագ սոցիալականացման, նրանց ինքնուրույնության և ակտիվության խորացման համար:

Շատ կարևոր է, որ սովորողները կարողանան գնահատել սեփական երկրի տնտեսական, քաղաքական, գիտական մտքի զարգացումները, արժևորել հաջողությունները, դրանց նշանակությունը, մեր երկրին սպառնացող վտանգներն ու մարտահրավերները և իրենց դերը հայրենիք կերտելու գործում:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը և պահպանումն այսօր դարձել է արդիական խնդիրներից մեկը: Ժամանակակից աշխարհի գլոբալացման և աշխարհակարգի ձևավորման պայմաններում վտանգված է հայոց ինքնության և պետականության պահպանման հիմնահարցը: Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտող միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այդ խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ

տերությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին:

Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության ընթացքում պայքարել է հանուն գոյի և ամեն գնով պահպանել այն արժեքները, որոնք եղել են հարատևման գրավականներ: Հող, լեզու, պատմություն, հավատ, ահա այս քառարժեք համակարգը դարձավ բոլոր ժամանակների պայքարի հիմնաքարը: Ցավոք, այսօր հակասական իրականության և ազգային գաղափարախոսության հաճախակի բախումը ծնում է նոր խնդիրներ և նոր արժեքների բևեռացում: Երբ Հայաստանը ծայրահեղ ծանր օրեր է ապրում՝ պարտության դառնահամը բերանում, կորցրած տարածքների ափսոսանքը սրտում(տարածքներ, որ ձեռք էին բերվել մեր զավակների թանկ արյան գնով, և հազարավոր նոր զոհերի կսկիծը սրտում): Ուստի խիստ անհրաժեշտ է երեխաների մեր հավատ ներշնչել հայրենիքի ապագայի նկատմամբ, սխալներն ուղղղելու անհրաժեշտությունը գիտակցելու , ոտքի կանգնելու, նոր ուժեղ հայրենիք ստեղծելու ուղի մատնանշել:Սովորողների մեջ պետք է արմատացնել,որ հայրենիքն է ամենաբարձր արժեքը:

Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ, երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, ուր հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով և մշակութային արժեքների պահպանմամբ:

Ասում են, եթե ուզում ես տեսնել ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը, քանզի վաղվա օրը, ապագան հաստատ կախված է մեր ներկայից:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է՝

- Բացահայտել և հիմնավորել սովորողի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմություն առարկայի դերն ու կարևորությունը, պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:
- Բացահայտել և կարևորել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները, վերհանել դրանց սխալները, թերությունները:
- Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
- Դասաժամերին անրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին, սխրանքներին, որոնք ավելի կոգևորեն սովորողներին, կդաստիարակվեն հայրենասիրության ոգով:

Հետազոտության խնդիրները

- Մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:
- Պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Գլուխ 1

Արժեհամակարգ

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն իմաստով: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր են բոլոր ուսումնական առարկաները, հատկապես Հայոց պատմության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ միջնակարգ կրթության պետական չափորոշչում, որպես կրթության բովանդակային բաղադրիչ, հայոց պատմության առարկայական չափորոշչում:

Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու զորեղացնելու անսասան վճռականությամբ: Այսպես ժամանակի հոլովույթների մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից ու ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության խորհուրդը:

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք

բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման ու բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Արժեքային համակարգը նախատեսում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին
- Կարևորի ազգային -պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրա-ժեշտությունը
- Նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը
- Գիտակցի, որ կյանքում կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը պատմական գիտելիքների համակարգված ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քացաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հայոց պատմության յուրաքանչյուր դասին նախապատրաստվելիս կարևորվում են բովանդակային մասերը, որոնք նվիրված են ազատամարտի նշանավոր գործիչներին և ոգեշնչում ու հայրենասիրությամբ են վարակում սովորողներին: Դա նպատակային և դյուրին է դառնում ազգային-ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս:

Տարբեր քաղաքակրթությունների առաջացմանն ու զարգացմանը զուգահեռ, հասարակարգերի համար պահանջ է դարձել սեփական պատմության, հայրենիքի,

ազգային արժեքների պահպանումը: Այդ արժեքները ձևավորվել են ազգի կենսագործունեության ընթացքում՝ կերտելով ազգային դիմագիծ:

Հայ ժողովուրդը հնագույններից մեկն է: Հայկից սերված այս ժողովուրդը իր գոյության և լինելիության տարեգրության մեջ հարուստ ու լի է նվաճումներով, կորուստներով, պարտություններով, հաղթանակներով: Շրջապատված լինելով թշնամի հարևաններով, երբեմն խառնվելով այլ ազգերի հետ ու մասամբ էլ ձուլվելով, այնուամենայնիվ, իրեն հատուկ համառությամբ կերտել է հայ մարդու կերպարը, ստեղծել բազմաթիվ ազգային ու մշակութային արժեքներ: Դրանք դարձել են ազգի ինքնաճանաչման, ինքնության պահպանման, ինքնադրսևորման և կենսագործունեության հիմնաքարը՝ լեզուն, կրոնը, հայրենապաշտությունը:

Մշակութային հարուստ պատմություն ունեցող հայ ազգի գոյապայքարում իր առանձնակի դերն է ունեցել հայոց եկեղեցին: Այն ժողովրդին միաբանելով մեկ հավատքի շուրջ՝ սահմանել է հոգևոր կյանքի միասնական ձևեր ու սկզբունքներ՝ պահպանելով ազգային ավանդույթները, սովորույթներն ու ծեսերը: Եկեղեցին էր, որ ձեռնամուխ եղավ սեփական գիրն ունենալու գաղափարի իրականացմանը: Ինչն էլ մեծ ուղի պիտի հարթեր իր ինքնության պահպանման և հնագույն ազգերի շարքում իր պատմական տեղն ու դերն ունենալու համար: Լեզուն է, որ դարավոր ճանապարհ հարթեց դեպի անսահմանություն՝ դառնալով մեր հոգևոր էությունը: Անժխտելի փաստ է, որ այն ժամանակ, երբ Հայաստանը զուրկ է եղել պետականությունից, ազգային եկեղեցին մեծ դերակատարում է ունեցել դպրության զարգացման և ազգի գոյապայքարում: Երբ հոգևոր առաջնորդները խաչով և սրով պայքարի կոչեր են արել, կանգնել ժողովրդի կողքին, ոգևորել, դարձել ազատագրական շարժման առաջնորդ:

Պատմության դասաժամերին ուսուցչի օգնությամբ աշակերտները բացահայտում են, թե իրենք ովքեր են, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում: Երբ աշակերտը ուսումնասիրում է հայոց պատմության հերոսական էջերը, ազատագրական պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրությունը, ինքն էլ կարծես «վարակվում » է և ձգտում է հասնել այդ կերպարներին:

Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, մշակութային արժեքները ճանաչելուի և ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով:

Գլոբալիզացիայի դարաշրջանում արժեքների վերաձևակերպումները մեզ հեռացնում են դարեր շարունակ ամրագրված ազգային արժեքներից, և այդ պատճառով պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել, և մենք իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր պապերն են իրենց արյան գնով պահել ու փոխանցել մեզ:

Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը՝ և վերհանեն շատ կարևոր փաստերից մեկը, որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովուրդը շփվելով տարբեր քաղաքակրթությունների հետ, և փոխազդեցությունների մեջ լինելով պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը:

Հայ ժողովուրդը ապրել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այդ խնդրին, քանի որ տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը, և յուրաքանչյուր երլիր փորջում է իր կողմը գրավել հայ ժողովրդին: Շատ կարևոր է, որ աշակերտներին հանձնարարել լրացուցիչ տեղեկություններ և նյութեր հավաքել մեր ազատամարտիկների կյանքի գործունեության վերաբերյալ: Նրանք կհարստացնեն իրենց գիտելիքները:

Գլուխ 2

Գործնական համատեքստ

Պատմության դասժամին ներկայացվող պահանջներից մեկն էլ ուսուցման մեթոդների կիրառումն է, ավանդականի և նորագույնի զուգակցումը:

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտների մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտի աշխարհայացքը, զարգացնել նրանց ընդունակությունները:

Ուսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: Ուսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Լև Վիգոտսկին գրել է. «Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք »:

Պատմության դասին ուսուցման ամենատարածված ձևերն ու ակտիվ մեթոդներն են՝

1. Պատմել (դասախոսություն)
2. Զրույց-բանավեճ-հիմնավորում
3. Աշխատանք դասագրքով և լրացուցիչ գրքով (սկզբնաղբյուր)
4. Մտագրոհ, հարց ու պատասխան, խմբային աշխատանք
5. Ինքնուրույն աշխատանք
6. Վենի դիագրամ
7. T –աձև, M-աձև աղյուսակները
8. Քարտեզագրում
9. Համակարգչով դասի անցկացում (պրեզենտացիա) և նյութերի ցուցադրում
10. Գործնական աշխատանք
11. Գրավոր աշխատանք՝ համառոտագրում
12. Աղյուսակների կիրառում
13. Դերային խաղ

14. Քարտեզային քննարկում
15. Կերպարային քարտ
16. Թեստային աշխատանք

Պատմության դասաժամերի ընթացքում աշակերտի մոտ ձևավորվում է հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություն և վերհանում: Ելնելով պատմական նյութի բովանդակությունից և հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչն ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ՝ դասի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Դասի արդյունավետության բարձրացման մեթոդներ

1. Սովորողների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի աշխատանքը սկզբնաղբյուրների հետ: Բացի դասագրքային դասից ուսուցիչը կարող է հանձնարարել նաև ընթերցել հատվածներ պատմական այս կամ այն սկզբնաղբյուրից: Սկզբնաղբյուրներ են համարվում գիտական հոդվածները, թերթերը, պատմական նամակները,
2. լուսանկարները, փաստաթղթերը: Դասագրքում ևա կան հատվածներ սկզբնաղբյուրներից, պատմիչների աշխատություններից: Ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից սկզբնաղբյուրները կարող են ծառայել որպես ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտություն, ձևավորում կարծիք աշակերտի մոտ:
3. Պատմության դասին նպատակահարմար է կատարել խմբային աշխատանք՝ ելնելով թեմայից ու պատմական դեպքերից: Դասրանը բաժանել 4 հոգանոց տարասեռ խմբերի և յուրաքանչյուր խմբի բաժանել թերթիկներ, որոնց վրա գրված են հարցեր պատմական դեպքերից: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է պատասխանը, իսկ վերջում

կատարվում է վերլուծության ամփոփում: Անհրաժեշտ է խմբային աշխատանքի մեջ ներգրավել բոլորին, և հարցումներ անել բոլոր աշակերտներին: Նոր դասի հաղորդումը նույնպես կարելի է կատարել խմբային աշխատանքով՝ կապելով անցյալի հետ: Սովորողները կարողանում են կայացնել որոշումներ, պատմական հիմնախնդիրներ վերլուծել, կարծիք արտահայտել:

4. Խմբերի հետ կարելի է կազմակերպել դերային խաղ: Խաղի համար կարելի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ ունեցող թեմաներ, մասնակիցները կարող են ներկայացնել պատմական որևէ տարբեր դերեր, օրինակ հայոց թագավորների, սպարապետների կերպարներ: Դերային խաղը կարելի է կազմակերպել փոքր խմբերով, հետո կատարել վերլուծություն, քննարկում դասարանում:
5. Պատմության դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է՝ համապատասխան նկարների ու քարտեզների օգտագործում, ինչպես նաև դիտաֆիլմերի, ձայնագրությունների կիրառում, որը շատ արդյունավետ է ու ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն: Համակարգչով ցույց է տրվում պատմական դեպքերից ու իրադարձություններից սլայդերի ձևով պրեզենտացիա: Շատ կարևոր է դասաժամին դասի վերաբերյալ որևէ ֆիլմի դիտումը:
6. Դասագրքով աշխատելիս աշակերտը ոչ միայն պետք է կարողանա վերարտադրել կամ սերտել ուսուցվող թեման, այլը համադրի դեպքերն ու փաստերը, ստեղծի կապ անցածի ու ներկայի հետ: Հանձնարարել աշակերտներին կատարել ինքնուրույն համառոտագրություն տետրում:
7. Շատ կարևոր է, որ աշակերտներն ունենան պատմության տերմինների հասկացությունների տետր:
8. Շատ կարևոր է, որ ուսուցիչը դասարանին հանձնարարի կազմել ցուցապաստառներ (պլակատ) պատմության որևէ թեմայի վերաբերյալ, օրինակ՝ «Ես անկախության սերունդն եմ», «Հայոց մեծ Եղեռնը» և այլն: Որը նպաստում է աշակերտների համագործակցային

աշխատանքին,տալիս է սովորողներին ինքնուրույն մտածելու, գիտելիքները խորացնելու հնարավորություն:

9. Բարձր դասարաններում պատմության ուսուցման համար կարելի է կիրառել պարապմունքներ սեմինարների ձևով՝ նախագծային մեթոդի օգնությամբ:
10. Կերպարային քարտ- սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները: կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցումների քննարկման համար:
11. Քարտեզային քննարկում- Քարտեզները հրաշալի միջոց են աշխարհագրական գիտելիքը պատմության արդյունավետ մաս դարձնելու, պատմության աշխարհագրական ընկալումը ձևակերպելու համար:

Դասը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում(ԽԻԿ):

Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներն են.

- Մտագրոհ
- Պրիզմա
- Հարցեր
- Համառոտ զրույց և այլն:

Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ կարող են լինել .

- Վենի դիագրամա
- Աղյուսակների կազմում
- Խճանկար
- Ապագայի անիվ

- Համառոտ դասախոսություն
- Զրույց

Դասի կշռադատում փուլի ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները.

- Քառաբաժան
- Քարտեզագրում
- Թեստեր
- Հարցեր ու պատասխաններ ամփոփում և այլն:

Օրվա դասի պլան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9-րդ

Թեմա՝ Ապրիլյան քառօրյա պատերազմը

Մեթոդներ՝ Մտագրոհ, Վենի դիագրամ, կարճ դասախոսություն, համագործակցային մեթոդ, Հարց ու պատասխան:

Հիմնական հասկացություններ՝ հայրենական պատերազմ, անձնուրաց հերոսություն, հավաքական կամք, հայ զինվոր, չխնայել կյանքը, հանուն հայրենիքի:

Դասի նպատակը՝

1. Ձևավորել գիտելիք քառօրյա պատերազմի պատճառների, հարձակման ուղղությունների, ավարտի, հետևանքների մասին
1. Հերոս հայորդիների օրինակով բացատրել հայ զինվորի կյանքի գնով հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությունը
2. Ձևավորել քննադատական մտածողություն՝ հիմնավորելու հայ ժողովրդի տարբեր խավերի (մտավորական, զինվորական, բժիշկ, ուսանող, դպրոցական երեխա) պատրաստակամությունը և համախմբվածությունը՝ հայրենիքը պաշտպանելու գործում
3. Ձևավորել հայրենիքը որպես բացարձակ արժեք գաղափարը;

Վերջնարդյունքները.

1. Ներկայացնել՝ երբ է ընթացել քառօրյա պատերազմը,
2. Ներկայացնել պատերազմի պատճառները, հարձակման ուղղությունները, ավարտը, հետևանքները:
3. Ներկայացնել քառօրյա պատերազմում մեր զինվորների քաջությունը:
4. Արժևորել քառօրյա պատերազմի մասնակից զինվորների անմահ սխրանքը:
5. Գնահատել և հիմնավորել քառօրյա պատերազմում դպրոցականների օգնության պատրաստակամությունը:

Դասի ընթացքը՝ Ուսուցիչը դասն սկսում է դասի ամփոփմամբ: Հարցեչի միջոցով ստուգվում է աշակերտների գիտելիքները Արցախի ազատագրական 1992-1994թթ. պատերազմի մասին:

Խթանում՝ (մտագրոհ) աշակերտները թվում են, պատերազմի ինչ տեսակներ գիտեն.

Պատերազմ

Ամբողջացնելով միտքը, սովորողները փաստում են, որ 1992-1994թթ. Արցախյան պատերազմը ազատագրական բնույթ ուներ, իսկ թշնամին

զավթողական նպատակներ և որ թշնամու զավթողական կեցվածքի պատճառով է, որ բազմիցս խախտվել է զինադադարի պայմանագիրը և որ թշնամու հետագա հարձակումները 2016-2020թթ. նույնպես մեր տարածքների նկատմամբ անօրինական և անմարդկային գործողություններ էին:

Իմաստի ընկալում՝

Ուսուցիչն անցնում է նոր դասի հաղորդմանը և դասախոսության միձոցով ներկայացնում է դասը՝ Արցախյան քառօրյա պատերազմը: Սովորողներին բաժանում է խմբերի և հանձնարարում դասանյութը սովորելիս ուշադրություն դարձնել թշնամու կողմից կիրառվող զինտեխնիկային և թվական անհամեմատ գերակշռությանը և դրան հակադրել մեր 18-20 տարեկան քաջորդիների սխրանքը:

Աշակերտներին հանձնարարվում է համեմատել Արցախյան 1992-1994թթ.-ի և 2016թ, քառօրյա պատերազմը, գտնել նմանություններ ու տարբերություններ և լրացնել դիագրամը:



Այնուհետև ամբողջացնում են հայ զինվորի կերպարը

Աշխատանքը կատարելուց հետո աշակերտները քննարկում են հետևյալ հարցերը. «Որո՞նք էին Արցախյան 44-օրյա պատերազմի պարտության պատճառները», «Ինչպե՞ս դուրս գալ ստեղծված իրավիճակից»:

Եզրակացություն

Մեծ է ուսուցչի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում: Որպես ամփոփում՝ կարելի է ազգային արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում կարևոր տեղ հատկացնել տարբեր դասաժամերին, իսկ պատմության, հատկապես հայոց պատմության դասաժամերին՝ առավել ևս:

Այժմ հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ծողովրդի ինքնության և հայոց պետականության գոյությունը: Բավ է կրկնել անցյալի սխալները և արդարանալ՝ մեղադրելով ճակատագրին: Չէ՞ որ ճակատագիրը պահին է վայել, իսկ պատմությունը՝ ապագային: Պետք է պահպանենք պապերից ժառանգած թասիբն ու կամքը, ազգի պատիվն ու արժանապատվությունը, համախմբված ազգային գաղափարների շուրջ ամուր հավատով ու ոգով: Լինենք մեր խղճի ստրուկը և ոչ թե անցողիկ փառքի, ապավինենք մեր հայրենի հողի ուժին և որքան խորը մխրճվենք նրա մեջ, այնքան ամուր կլինենք մեր արմատներով, այնքան ուժեղ ր հզոր; Սա է հաղթելու արվեստը: Շարունակենք լինել հայոց հողի միակ տերը, պայքարենք հանուն կյանքի, ապրելու և ապրեցնելու: Եվ նորից կանգ ենք առնում այն մտքի վրա, որ բոլոր հաղթանակների գրավականը միաբանությունն է, միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Արժեքային համակարգը նախատեսում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողություն ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք: Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում, գիտակցի ներկան ու ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ
2. Առարկայական չափորոշիչներ https://escs.am/am/news/8621
3. Գևորգյան Ա. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում , Երևան 2002թ.
4. Հայագիտությունը դպրոցում: Գիտամեթոդական վերլուծական հանդես 4. 2016թ. (էջ 50)
5. Հ. Ղևոնդյան Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան 2001թ
6. Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս „Պարադիգմա կրթական հիմնադրամ” Երևան 2020 (էջ39) 496973